ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՓԱՍՏԱԲԱՆ ԲԱԿՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԻ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՂՏՆԱԼՍԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20.05.2021 16:43

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը համակարգող Գևորգ Մկրտչյանի և անդամներ՝ Արմինե Ֆանյանի, Արսեն Մկրտչյանի, Արմեն Ֆերոյանի կազմով, մասնակցությամբ փաստաբան Բակուր Օհանյանի,

ուսումնասիրելով փաստաբան Բակուր Օհանյանի կողմից ներկայացված դիմումը՝ իր և իր վստահորդների հեռախոսային խոսակցությունները գաղտնալսելու վերաբերյալ, արձանագրել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզի քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնում քննված թիվ 55101821 քրեական գործի նյութերում առկա են «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված ամփոփագրեր, որոնց մի մասը վերաբերում են փաստաբան, նույն գործով պաշտպան՝ Բակուր Օհանյանին պատկանող բջջային հեռախոսահամարի գաղտնալսումներին։

Նշված ամփոփագրերից նաև բխում է, որ հեռախոսային խոսակցությունների մի մասը վերաբերում են՝ Բակուր Օհանյանի և այլ քրեական գործերով, վերջինիս պաշտպանյալների հետ ունեցած հաղորդակցությանը, որոնք այլ քրեական գործերով հանդիսանում են փաստաբանական գաղտնիք պարունակող տվյալներ։

Հանձնաժողովն ուսումնասիրելով փաստաբան Բակուր Օհանյանի կողմից ներկայացրած նյութերը, լսելով վերջինիս բացատրությունները, դրանք վերլուծելով միջազգային և ներպետական իրավակարգավորումների լույսի ներքո, ***<u>ՈՐՈՇԵԼ Է.</u>***

- ***<u>ՀԱՅՏԱՐԱՐԵԼ</u>.***

առանց սահմանադրաիրավական երաշխիքների (դատարանի որոշման բացակայության պայմաններում) հեռախոսային խոսակցությունների վերահսկումը և ձայնագրառումը մարդու հիմնարար իրավունքի՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքի խախտում է։

Քրեական հետապնդման մարմինների կողմից փաստաբան, թիվ 55101821 քրեական գործով պաշտպան Բակուր Օհանյանի հեռախոսային խոսակցությունները գաղտնալսելու, դրանք հետազոտման առարկա դարձնելու, քրեական գործին կցելու և դատավարության այլ մասնակիցներին հասանելի դարձնելու մասով իրականացված գործողություններն ապօրինի են և չեն բխում ինչպես միջազգային, այնպես էլ՝ ներպետական իրավակարգավորումներից։

- <u>ԴԱՏԱՊԱՐՏԵԼ.</u>

ՀՀ ոստիկանության Թումանյանի բաժնի և ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզի քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի համապատասխան պաշտոնատար անձանց կողմից փաստաբանական գաղտնիքը խախտելուն ուղղված գործողությունները, ինչպես նաև քննիչ Ս.Դանիելյանի՝ գաղտնալսման արդյունքները ոչնչացնելուց հրաժարվելը։

- <u>ՀՈՐԴՈՐՈՐԵԼ</u>.

իրավասու ՀՀ պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց.

զերծ մնալ առանց դատարանի որոշման՝ անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի գաղտնիության իրավունքը խախտելուն ուղղված գործողությունների կատարումից։

Իրավական գնահատական տալ, ինչպես՝ առանց դատարանի որոշման համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացրած, այնպես էլ՝ փաստաբանի և վերջինիս վստահորդի (վստահորդների) միջև հեռախոսային խոսակցություններն ապօրինի գաղտնալսած պաշտոնատար անձանց գործողություններին։

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի

Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողով

Բեռնել Հանձնաժողովի որոշումը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })